

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.10.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը - մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա) Նորանշանակ մարզպետի տեղակալի, մարզպետի խորհրդականի և մարզպետի օգնականի ներկայացում

բ) Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
վարչությունների պետեր/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Այն հանձնարարականների (նաև դիմումների) վերաբերյալ, որոնք ուսումնասիրությունների արդյունքում իրենց մեջ պարունակում են իրավախախտման դեպքեր, փաստեր, հանգամանքներ, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ իրավապահ մարմինների կողմից քննություն իրականացնելու նպատակով:

բ) Քաղաքացիների կողմից դիմում-բողոքներ ներկայացնելու ժամանակ անհրաժեշտության դեպքում ուսումնասիրություններ կատարել տեղում, դրանցում հնարավորինս ընդգրկելու դիմումատուին ու այլ շահագրգիռ անձանց և ուսումնասիրության վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ա.Մատինյանին, աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին՝

Ըստ ոլորտների անհրաժեշտ հսկողություն սահմանել ենթակա կազմակերպություններում կոռուպցիոն դրսևորումները և կուսակցական պատկանելությամբ առաջնորդվելը բացառելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ա.Մատինյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ մարզի թվով 5 դպրոցներում արտահերթ աուդիտ անցկացնելու վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Մարզպետարանի, մարզպետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների թափուր աշխատատեղերի բոլոր մրցույթների հայտարարությունները, սոցիալական օգնությունների տրամադրման անհատական ցուցակները տեղադրել մարզպետարանի կայք էջում:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ.Հակոբյանին, մարզպետի օգնական Գ.Մարկոսյանին՝

Անհրաժեշտ վերահսկողության տակ պահել տեղեկատվական հարթակը և ամենօրյա հաշվետվություն ներկայացնել մարզպետին:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ